Օ ի՞նչ է լուսին ։ — Կարմրութիւն երկնաւոր, մխիթարիչ գիշերոյ, օդոյ ճանապարհորդ, նաւորդաց մխիթարիչ, բոլորակ որում չհասանի ոք, անծագ տեսիլ, կենդանեաց հանդէս, պահպանորդ գիշերոյ, դայեակ անձրևոյ, մայր պտղոց, յաւիտենից նշանակ ։

Օ ի՞նչ է մարդ ։ — Կամն Աստուծոյ, մարմին հոգեկիր և մտաւոր, տաճար հոգւոյ, դոյզնժամանակեայ տեսիլ, գործի աճառապինդ ոսկերբ և ջղօք և այլովքն հանդերձ, տեգ աշխարհի, բախտի խաղալիկ, բարի հարևանցիկ, կենաց մաշիչ, ինքնայօժար յամենայն, արհամարհիչ ամենայնց, տեսիլ յաւիտենական ։

Օ ի՞նչ է գեղեցկութիւն ։ — Ակար բնութեան, ստացուած որ անցանէ, ծաղիկ որ թարշամի, դրոշմած չնչաւոր, տեսիլ ցանկալի ։

Օ ի՞նչ է սէր ։ — Խնդիր բարեաց, մարդ աներևոյթ, վարանելոց մխիթարութիւն, թիկունք թշուառականաց, ինչ մի որ ամենեցուն պիտոյ է և ոչ է 'ի միջի ։

Օ ի՞նչ է մեծութիւն ։ — Ներինք ոսկեղէնք, ցանկութեանց արբանեակ, անխրատ վայելչութիւն, կապեալ ընդ երկիւղի, կասկած անդուլ, ագահաց թշուառութիւն, երկն հանապազորդեան, իրք դիւրափոխ, բազմաց ըղձալի, տնկածոյ իմաստք, ծփումն անդուլ, փոփոխումն անդադար, իրք են ամենեցուն նենգի և վնասի (պատճառ), հոգք վերադրեալք 'ի մարդկան կամակարութենէ ։

Օ ի՞նչ է աղքատութիւն ։ — Բարի ատեցեալ, մայր առողջութեան, խափանիչ ամենայն ցանկութեանց, վարք անհոգք, անխաբ ստացուած, վարդապետութիւն հնարեալ, գտակ իմաստութեան, ստացուած որիշ (ազատ) 'ի զրպարտէ, ստացուած ոյր զկնի ոք ոչ ընթանայ, գանձ հաստատուն, բաղդ անհոգ ։

Օ ի՞նչ է նաւավար ։ — Ալեաց ճանապարհորդ, ծովու մշակ, հողմոց ուղեկից, աշխարհի օտար, ձմերանւոյ նահատակ, նաւահանգիստ սքանչելի, ղուղորդ մեռելոյ, կցորդ կորստեան, ծովականաց մենամարտիկ, ինքնայօժար 'ի մարտ ։

Օ ի՞նչ է մշակ ։ — Ժամանակաց արբանեակ, անձրևաց մատակարար, սնունդ վայրի, առանց ծովու վաճառական, ծառոց տնկիչ, աղքատութեան հոյկապ, բժիշկ հողմոց, ժամուց դաստիարակ ։

Օ ի՞նչ է քուն ։ — Աշխատութեց հանգիստ, բժշկաց սատար, կապելոց լուծումն, տքնեցելոց իմաստք, հիւանդաց իղձք, մահու պատկեր, ուսումն հանապազորդեան ։

Օ ի՞նչ է ծերութիւն ։ — Դիւրագիւտ չար, կենդանի ճաղճամահ, սպասիկ մահու, քնալից ծաղր, ապշութիւն առ իմաստութեանց օտար, պահակ ցպոյ, ցանկութեանց օտար, մեռեալ զեռուն ։

Օ ի՞նչ է մահ ։ — Քուն յաւիտենական, քակտումն մարմնոյն, հիւանդաց խնդրուածք, թշուառականաց իղձք, հոգւոյ հեռացումն, մեծատանց երկիւղ, աղքատաց պանծալի, քակտումն անդամոց, հայր քնոյ, հրաժեշտ ամենայնի ։

Աղօթք տղայոյ ։

Տէր, ես մանուկ եմ տըկար,
Զինև վրտանգք են անթիւ.
Դու զիս պահեա, բարերար.
Առ իս լեր միշտ քաջ հովիւ ։

Անմեղ կոչէն զիս տըղայ,
Գըգուէն գովէն 'ի խրախոյս.
Բայց ես գիտեմ զի մեղայ,
Ներեա փրկիչ իմ Յիսուս ։

Ո՞վ տէր, ահա գայլ անգութ
Յար ինձ, ասեն, դարանի.
Ո՞ւր քո գառինս վայր անքոյթ,
Բայց 'ի ծոցիդ տէրունի ։